22.03.24 - 22.03.24
13:00
Անցանց
Գրանցումը բաց է
☑

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ ISTC ինովացիոն կենտրոնի կոնֆերանս դահլիճ

Ս.թ. մարտի 22-ին՝ ժամը 13:00-ին, ԵՊՀ ISTC ինովացիոն կենտրոնի կոնֆերանս դահլիճում (ԵՊՀ 7-րդ մասնաշենք, 6-րդ հարկ) կկայանա «Մարաքեշ 2022–Երևան 2023/2024. մեծահասակների ուսումնառության և կրթության (ՄՈՒԿ) գլոբալ և լոկալ միտումներ» նախագծի ամփոփիչ համաժողովը։

Համաժողովը կազմակերպվում է Երևանի պետական համալսարանի և «Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ»-ի հայաստանյան գրասենյակի նախաձեռնությամբ և Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության ֆինանսական աջակցությամբ։

Մասնակցելու համար անհրաժեշտ է նախապես գրանցվել՝ անցնելով հետևյալ հղումով՝ https://shorturl.at/gizGP։

«Մարաքեշ 2022–Երևան 2023/2024. ՄՈՒԿ գլոբալ և լոկալ միտումներ» նախաձեռնության շրջանակում 2023 թ. անցկացված բաց մրցույթի արդյունքում ընտրված ԵՊՀ 10 ֆակուլտետների դասախոսներից և ուսանողներից ձևավորվել են հետազոտական 5 խմբեր։ Նրանք ուսումնասիրել են «Մարաքեշի գործողությունների շրջանակ»-ում ներառված թեմատիկ այնպիսի խնդիրներ, որոնք կարևոր նշանակություն ունեն ՀՀ-ում մեծահասակների ուսումնառության և կրթության զարգացման տեսանկյունից։ Նրանց ուսումնասիրության տիրույթում են եղել նաև հետևյալ թեմաները՝

- «Թվանշային խզվածք»-ի բովանդակությունը Հայաստանում. թվանշային բաժանում և հասարակական համատեքստ,
- ՀՀ երիտասարդների մասնակցությունը ոչ ֆորմալ կրթության դասընթացներին և հարմարումը աշխատաշուկայում,
- քաղաքացիական գիտելիքը և մասնակցությունը ԵՊՀ ուսանողների շրջանում,

- ՀՀ-ում մեծահասակների ուսումնառության և կրթության պետական ֆինանսավորման հիմնախնդիրները,

- ՀՀ-ում մեծահասակների կրթության վերաբերյալ հոգեբանական դիրքորոշումները և սոցիալական ընկալումները:

Նախագծի վերաբերյալ այլ մանրամասների հնարավոր է ծանոթանալ այստեղ:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am